

9. u-li-e¹ i-ni li du+li-e (AN) Hal+di-s
դուլլիյն զպս տեղէ՛ զանդէ, (դէք) հաղդիս,
10. [(AN) IM-]s (AN) UT-s qi-is-
[(դէք) Տէրբա]s, (դէք) Արդինիս տիեզերա-
mu+ši-a-s³ AN-MEŠ
դործ աստուածքն
11. [pa-]ru-[u-]ni-e-ni⁴ ma-a-ni e-ū⁵ [me-i]
զնուեզս նորս եւ [նորս]
12. [qi-]li-bi-[i⁶ qi-i-]u-ra-a-ni e-di-ni-[e]⁷
զկրակարանն՝ զտունն՝ կործանեցեն:



ԱՍՏՄԱԿԱՆ

Ս. ՅԱԿՈԲ

ԱՅԳԱՅԻՆ ՀԻՒՆԿԱՆՈՍ

— (Ըրոմն-Խոթի-ն-)

ՓԵ.

ՓԲ. ՀՈԳԻՍԵՐԶՈՒԹԻՆ

1896—1898

Քիւրէեան Դրիգոր Առննապետ եւ Դան-
ժապետ:

Քիւրէեան Հ. Նոնա Վ. Միաբան Անտոնեան
խորհրդական:

Փիլիպպոսեան Յոնան խորհրդական:

Թերզեան Թումաս Առննապետ:

Միհրան Դրիգոր:

Աստու Պաշա խրանանու կառավարու-
թեան երրորդ տարին կը վախճանի ի Պէյրուսի,
Քիւրէեան Գրիգոր իր աները Կ. Պոլսն կը վե-
րագառնայ եւ վերադառնա Ս. Թադրայ խորհրդին
Առննապետ եւ կարգուի տարւոյս Ապրիլ 7ին:

Հմմտ յն. 'օւ-օս, օւլ-օս 'օղջն, ամբողջ, բո-
վանդակ:

Ս. Այսինքն՝ արձանագրութեան քարը եւ անոր բո-
ւրբորը զտնուած զարգաբանքը:

Քաղաքագրեալ բառ. ա) qismu +, որպ. սալ, qis-
mus. Հմմտ յն. κόσμος 'տիեզերք, աշխարհ, — բ) ἕλας,
ընդունել, ներկ. սալ, որպ. արմատ եւ ἕλ... Հմմտ Հ.Պ.
շի-ն-նի:

Ս. Արմատ parū... — լատ. pario 'նշանակ,'

Ս. Գրիգոր e-ha:

Հմմտ յն. χίλιαν-օս 'փոռ. զաշտի, ուսով

'կրակարան, ուրբորտան լեզուի մէջ:

Հմմտ ed... արմառ՝ յն. ին-օ 'կործանեմ',
ծախեմ, սպառեմ, բառին հետ:

Հոգաբարձութեան առաջին գործը կ'ըլ-
լայ Դոկտ. Նուրիճանի հրատարակմ. Դոկտ.
Դեորդ Ջօհրապը Անկիւնոցիս բժշկապետու-
թեան կողմէ, Դոկտ. Lacombe ալ՝ վերաբու-
ժապետութեան, վասն զի այս պաշտօնէն կը
հրատարկէր այլ եւս ծերութեան պատճառա-
րովս. Նաֆիլեան Պաշան ալ, Նոր բժիշկ եւ
նոր վերաբուժով թոշակաւոր հիւանդաց ալ
նոր սակագրներ կը հաստատուն, ինչպէս վարը
կը տեսնուին:

Թայեալաւոր հիւանդաց բնիկաներութեան
պայմանացուցալ

Պարզ հիւանդ . . . Ի սրահ զօրակն 12 գհին
ի սենեկի " 16 "
Փոքր վերաբուժական գործողութեանց
ենթակայ հիւանդ ի սրահ. . . 15 "
Մեծ վերաբուժական գործողութեանց
ենթակայ հիւանդ ի սրահ. . . 18 "
Փոքր վերաբուժական գործողութեանց
ենթակայ հիւանդ ի սենեկի . . . 20 "
Մեծ վերաբուժական գործողութեանց
ենթակայ հիւանդ ի սենեկի . . . 25 "

Երանթ. Վճարմունք 15 օրուան կանխիկ են:
Աւաջին 15 օրուան վճարմունքէն յետոյ բան
չտրուի:

Երկրորդ վճարմունքէ օրակն հաշուով վար
գրուելով՝ աւելորդը յետոյ կը դարձուի:

Հիւանդաց եւ յիմարաց պաշտպանք պար-
տէն դարձուր պարտականութիւն ստաննել թո-
շակաց նկատմամբ:

Ց. Կ. Բանկալթի, 15 Փետր. 1896:

Այս պայմանացուցակը Անկիւնոցիս գրա-
սենեակը շրջանակաւ կախուած է ի սեն ամե-
նեցուն եւ մինչեւ այսօր կը զօրէ:

Եւ որովհետեւ Ս. Թադրայ Անկիւնոցը
գլխաւորաբար Հայ Վաթիկիէ Հասարակու-
թեան աղքատ հիւանդաց համար է, ամէն պա-
տեհականութեանց հանդէպ պատրաստ գտնուե-
լու համար կ'որոշուի երբ պահանջի անկողին
ունենալ միշտ թէ՛ արանց եւ թէ՛ կանանց
հիւանդանոցներուն մէջ, եւ չտալ զանոց թո-
շակաւոր հիւանդաց:

Այս Հոգաբարձութիւնն ալ իր նախորդին
պէս երեք տուն կը շինէ իրեն եկամուտ Ան-
կիւնոցի ճարտարապետութեամբ Ալթունեան
Անտոնի, որ ըստ կարգի կարուածոց տետրակին
30, 31, 32 թիւերը կը կրեն: Այս առթիւ կը
նորոգեն նաեւ այն տունները որ Սայիսի վերեւը
լիմատայի փողոցին մէջ պատահած հրդեհէն
փնասուած էին, որոնց համար ըստ գնահատու-
թեան ճարտարապետաց 8000 դրահայն միայն

անուան էր La Foncière ապահովագրական ընկերությունն էր, և չինեմ նաեւ 500 ոսկիով զգուրդ մը եռալարէ Բեռլինէն Կիւղոյն վրայ, կից թիւ 1 տան, ուր է այսօր Եփրեան նախարարութիւնը, որ առաջ Տիւնիզիայի տրաքտատի մին կը գրաւէր: Ունի իր մէջը Հոգաբարձութեան արդի ժողովարար՝, դիւանը եւ մասնապարանը եւ գեանայարկին վրայ բաղանիք մը: Այս շէնքը նախ թարսոց եղաւ ոչ սակաւ մազապուր անձանց, վասն զի 1896 Օգոստ. 14 չորեքշաբթի օրը զորեկուան մօտ մերկացաւ մոլեռանգ իսլամին սուսերը, կոտորեց անկնայ անդէն ժողովուրդ մը, Հայերը, որ ահաւոր, Հարուածէն պիտոյն կը դիմէ ի Ս. Գաւր, որ գրկաբաց կ'ընդունի եւ կը սնուցանէ անխտիր երեք օր մինչեւ որ Համիտ Բ. Տայակեր Սուլթանը ընդհանուր ներում չնորհէ: (Դւ. Ս. 64. 89. 88.)

Ազգ. Աջ. Ժողովը Հոկտ. 26 նամակաւ կ'արտօնէ Հոգաբարձութիւնը ընդունելու Պասմաճեան Անտիի նուէրը, Եփրեանքայ քարաշէն տունը 400 օսմ. ոսկի արժողութեամբ յԱռնառնութեան վաճառի Հանգերձ Եփրեանց պայմաններով որ են:

1. Տալ իրեն 80 օսմ. ոսկի նախապէս, որպէս զի անով կարենայ վճարել իր մասնաւոր պարտքերը եւ պետական առեւտրը եւ տան թագրիւն համար Կարեւոր նախքերը:

2. Ընդունիլ Պասմաճեան Անտիի եւ իր կողակցին մինչեւ ցմահ յիշեալ տունին մէջ բնակութիւնը եւ գոյացած վարձքը յատկացնել անոնց ապրուստին:

3. Վերոյիշեալ 80 օսմ. ոսկին առնել Credit général դրամատունէն Անկիւնացի հաշուին հոն զետեղուած 2000 օսմ. ոսկին աւանդ գումարէն:

4. Տունը փոխանցել Մարիամ պինդը Յովակիմայ վրայ, ինչպէս նաեւ անոր ապահովագրութիւնը:

5. Նորոգութիւնները պիտի վերաբերին Պասմաճեանի, այս կէտերուն վրայ պայմանագիր մը պիտի կնքուի Պասմաճեանի եւ Հոգաբարձութեան միջեւ, եւ Թայպի ի Պատրիարքարան:

Երկու խօսք ալ զուգահեռ Հոգաբարձութեան իրաւանց նախաձեռնութեան վրայ, եւ անէկ ետքը այս տարին ալ կնքենք: Գերբ. Տ. Յովհ. Ծ. Ա. Թումայեան, Տեսուչ Լուսաւորչեան Ուսումնարանի, քանի մը աղքատ աշակերտ կ'ընդունի, զոր լսելով Ս. Եփրեայ

Հոգաբարձութիւնը կը բողոքէ Գերբ. Տ. Եփրեայ, որ ունի օրինակ զայս:

Բարեկիշառակ Աղաբեան Արիտակէն էֆ. Ուսումնարանի մէջ 25 աշակերտ պահելու 6 տուն կոտորած ատեն, կոտորեցաւ Անկիւնացիի հոգին վրայ, նոյն աշակերտաց ընտրութեան համար Հոգաբարձութեան ալ իրաւունք մը յատկացուցած է իր կտակին մէջ: Ուստի մինչ լսելով որ այս տարի օժտուոր աշակերտներ ընդունել էք առանց մեր գիտակցութեան, կը խնդրենք որ այն աշակերտաց անուններն մեզ ծանուցանէք, եւ թէ ուրիշ նմանօրինակ պարագայից մէջ մեր իրաւունքն մեզ չչլնաւ:

Տարւոյս վերջը Անկիւնացի տարեկան հաշիւները ըստ Ազգ. Կանոնադրութեան վարչութեան ներկայանալով կը գտնենք հոն Մուտք դահկան 306.070:25. Ելք 224.618:75 եւ արեւել մէջ աւելցած գումար 81.451:50: Հաշուեցոյս ունի ստորագիր Գրիգոր Բիւրեղեան Ատենապետ: (Դւ. Ս. 64. 89. 135.)

Դոկտ. Lacombe վերաբուժիչ կը թերանայ իր պարտոց մէջ, գոցէ նոր վերահաստարանն շինուելուն համար, զոր յատուկ պայման դրած էր սոյն պաշտօնը ընդունած պահուն, որով Հոգաբարձութիւնս 1897 Փետր. 14 Անկիւնացի կ'ընդունի նաեւ զԴոկտ. Միհրան Զարգարեան, ըստ վկայութեան Դոկտ. Կաֆիլեանի, Մարգարեանի նշանաւոր վերաբուժիչներն, որ արդէն գրով յայտնած էր Ազգ. վարչութեան իր փափաքն Հիւանդանոցին համար ձրի աշխատելու, միայն թէ ինքն ալ ազատ ըլլար իր հիւանդները Անկիւնացի մէջ դարմանելու անոնց բնակութեան վարձքը միայն վճարելով ըստ պայմանացուցակին, եւ իրմէ զատ ոչ ոք վերահաստարան կատարէ Ս. Եփրեայ մէջ:

Դոկտ. Արիստիտի Պաշան ալ Անկիւնացի տարաբաշխութեան շինեման համար՝ ազնուութեամբ յանձն կ'առնու տարի մ'եւս տարաբաշխել հիւանդանոցն ղեկուած ախտախիւթերը, խուլը, մէղքը, թարախը, արիւնը, եւ ապաւառը եւ արդէնքը գրով հաղորդել Անկիւնացի բժշկական մարմնին:

Չափի հանգանակութիւնը այս անգամ Հոգաբարձուաց ձեռքը կը կատարուի ի Կ. Պալիս, բայց տարբեր արգիւնք մը շինեման, ըլլալով հանգերձ բաժնեկողմեր, ինչպէս ուրիշ անգամներ, արմի (Souche) դրութեամբ պատրաստուած: Արտասահմանի համար ալ ի Պարիս կիւղէ Բիէրին եւ ի Բոթի Բարդիկ Սամաճեանի կը ղեկն բաժնեկողմեր, ստորագրեալ Հ. Եղեան Ա. Բիւրեան, որպէս զի

ցրուեն այդ տեղեաց մէջ: Castelli ընկերութեան ալ Հոգաբարձութիւնն վարչական հրահանաւ կ'արտօնէ յանուն Ս. Յակոբայ սիկարի թուղթի վաճառումը, որուն Անկէլանոց շահակողքերը, ինչպէս եւ Շաշան Մանուէլը՝ ծախելու յանուն Ս. Յակոբայ աղացած սուրճ եւ թէյ թիթեղայ սուկիրու մէջ նոյնպէս շահակցութեամբ Անկէլանոցիս, ուսկից պիտի գներ արտանստերը գրոյմհապերը (Banderolas), բայց այս երկու ձեռնարկներն ալ հրապարակի վրայ յարգ չգտնելով՝ քիչ ժամանակէն կը խափանուին:

Օրորոյք Սոթի Մահպուտէ (Հայ կաթողիկէ) կը նուիրէ Անկէլանոցիս քարաշէն տուն մը չորս աննեակով ի Զեպա փողոց Պերայի թիւ 30, գրուած յանուն Մուրաթեան Աննայի, կին դերձակ Գրիգորի, պայմանաւ մինչեւ ցմահ վայելուլու, եւ անմիջական նորոգութեան, դիզեալ տոց եւ փոխանցման ծախքերը Անկէլանոցիս վրայ ըլլալու, իսկ ապագայ ծախքերը իր վրայ: Հոգաբարձութիւնն ընդունելով այս ամենը՝ ինչքը Վարդիճի ըլլալուն պատճառաւ՝ անմիջապէս Մարիամ պինդը Յովակիմին տնուն կը փոխանցէ յիշեալ տունը պետական կարուածագրոց մէջ:

Ազարեան Տիկին Աննայի մահուան անութիւ՝ Հոգաբարձութիւնը կը փութան խմբովին ցաւակնութեան այցը տալ Հանգուցելոյն սգաւ լից արդւոյն Վ. Պարթիարքին, որ քանի մ'որ ետքը հոգոհացի համար 90 օսմ. ոսկի կը ղրկէ Անկէլանոցին: (Դւ. Ս. Եկ. Տր. 93, 163, 204):

Քրիստիանի երկու պաշտօն միանգամայն կատարելը քննադատութեան նիւթ կ'ըլլայ ըստանաւց մէջ եւ հրապարակներու վրայ: Մնայուն

քննիչ Յաննախումբը կ'երթայ անանկեղ պահու աշէն անցնելու Անկէլանոցին դրամարկիդ վիճակը, եւ կը տեսնէ որ 60 օսմ. ոսկի մոլորեք է իր ծամբէն, եւ ըստ այնմ կը տեղեկագրէ նորընտիր Ազգ. վարչութեան, որ անմիջական որոշողութեամբ 1898 փետրուարի մէջ անպայման կերպով պաշտօնէ կը դադարեցնէ անխոր բողի Հոգաբարձութեանը 22 տարի պաշտօնավարութենէն հտըր: Ասոնք կը բողոքեն հաւաքապէս այս տարածամ պաշտօնի դադարման դէմ, բայց արդիւնք մը չ'ունենար, մասնաւոր լծե առժամապէս կը կարգեն անոնց տեղ Մահապուտէ Պետրոս եւ Գեղեցեան Մեղիքուն, որ տարեկան հաշիւներն տանելով՝ կը ղրկեն որուն որ անկէ, որ կը տեսնուին Մուսթ Գահկան 280.909:35. Եւք 271.894:50, եւ արկելը մէջ աւելցած գումար 9015:25: (Դւ. Ս. Եկ. Տր. 136):

ԹԶ.

ԺԳ. ՀՈՒՐԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

1898—1902

Սամանեան Տէր Բառնաբաս Վ. Ատենայեան
Շէրպէթեան Պօղոս } Խորհրդական
Նրազեան Միհրան }
Պրյըլլեան Փ. Գրիգոր Դանճապետ
Շաշեան Թ. Պետրոս Ատենադպիր

Երկրորդ անգամն է այս որ Ս. Յակոբայ Հոգաբարձութեան գլուխը կը քաննուի եկեղեցական մը, Տ. Բառնաբաս Վ. Սամանեան, որ մին էր Անտոնեան Միարանութեան հասուցած անձերէն: Ասի Մարտին մէջ պաշտօնի անցնելով՝ առաջին գումարման մէջ կը յայտնէ իր խորին շնորհակալքը յարգոյ պատանակցաց որ այնպիսի դժուար գործի մը ծանրութիւնը միասին բառնալու պատրաստակամութիւն ունեցան իր իսկ հրահրմամբ: Եւ Ազգ. վրէ ժողովոյն հաստատութեամբ: Գումարման մէջ կ'որոշուի այս տարի գաւառացի ազգայիններն եւս Զատիկ հանգանակութեան հրահրել, քանի որ անոնց ալ աշխատ տառապանքները լծեմ ոչ իրաւամբ, կը պատասպարուին ի Ս. Յակոբ (տես անդ էջ 68), որով Տրապիզոնի, Մուշի, Բերիդ եւ Եւզգիդի Եփեսոսպետներէն կը հանին Հոգաբարձութեան գումարներ, ոչ աւելի 5 օսմ. ոսկիէն, որ չի գիտցուի ինչ ինչ քսակէն ղրկած են թէ ոչ խորին ժողովգոհնէն հաւաքած: Տրապիզոնի համար սակայն չի կրնար զօրել այս տարակոյսը,

¹ Օսմանեան կայսրութեան մէջ Վառնի կ'ըսուի այն ամեն երկիրներն եւ անոնց վրայ չէնքըրը, զորս ժառանգորդ իրաւունքը զուակէն անդին չ'անցիր: Հետեւաբար այն ամեն կառավարածարէրը որ անդու ալ կը մտնէ, ինչքերէն յաւրանիս կը դառնաին եւ իշխանի կրօնական հաստատութեանց կը դործածուին: Այս օրէնքին կ'ենթարկուին նաեւ ամեն եկեղեցիներու, դպրոցներու, հիւանդանոցներու եւ վանքերու կառավարներն ալ, ժամն զի բարոյական եկէի (Etre moral) գրութիւնն ալ չէ ընդունած Տաճիկ Յերութիւնը որպէս զի փոխանցման հասցելը չիորոշեց: որով ամեն քրիստոնէայ հպատակ ազգերը գիտակցութեամբ պետութեան ենթարկեալ անհատ մը իրեն սեր իրենց կառավար ընտրած են, որուն անուն արձանագորդ կու տան ամեն կրօնային ինչքերը, զորս գտնէ 50—55 տարեի հեղ մը պէտք եւ ուրիշ մը փոխանցել, ներկայացնելով կառավարչաց պայտօնարանը ենթարկեալ տիրոջ սեռին համաձայն սեւէ սեւ մի կրեն վաճառող, որ սեննայ 75—80 տարեի, զորս կարելի է մարդուս ապրել:

վասն զի ունի նա աղքատսինամ ընկերութիւն մը, Հանգանակութեան մասնացած են նաեւ Թուսահայտակ Ալասաանցի պանդուխտներն ի Կ.Պոլսի, ինչպէս նաեւ Մալաթիաքաղաքի մեծամեծ հաստատութիւնները, որոնցմէ ոչ սակաւ նպաստ կը գոյանայ ամեն տարի, որպիսի են Փարոնսերու եւ Հանքային պարտուց վարչութիւնները, Քարափի, Թարմիէի եւ Արեւելքի վաճառականական ընկերութիւնները, Օսմանեան, Քրէտի կիսնէ, Վինքը, Օրիէնթ եւ Անլանիի գրամատուները: Կ'որոշուի դարձեալ շինել մոնէշները պահելու եւ ի հարկին դիպնիւթիւն կատարելու յատուկ տեղ մը որ զարդոյն շինութեամբը անհետացած էր, որուն ծախքը կը յայթայթուի գաղափարի թաշեան Անտոնի 7500 դահկան նուէրէն, զոր Անկիւնոցի համար մաս հանած էր իր Գրիգոր ճղգըմէն ժառանգած գումարէն: Հոգաբարձութիւնս իր 13/25 Նոյ. Թուսկիր նամակաւ, ստորագրեալ Առնեապետէն եւ Առնեապետէն, կը գրէ առ Ազգ. վարչութիւնն թէ Անանեան Նեկատու, գուստր Մանուկի եւ կողակից Բարուճնու հանգուցեալ Համարաձուփի, կը նուիրէ Անկիւնոցիս 226 կանգուն երկրի ի ֆերի-Քէօյ, Կանուր Օշլու փողոց թիւ 3 պայմանաւ ցմահ պատասխարելու Անկիւնոցիս մէջ: Հոգաբարձութիւնս ընդունելութեան արժանի կը տեսնէ սոյն նուէրը եւ կը խնդրէ որ վարչական ժողովս եւս եթէ պատշաճ տեսնէ, հաստատէ յիշեալ նւ: էրին ընդունելութիւնը եւ պաշտնադրով ինքն ծանուցանէ: Խնդրագրոյս պատասխանն կ'ըլլայ գրական:

Սամանճեանի Հոգաբարձութեան առաջին տարուան մէջ առանձինն նշանակութեան արժանի է Անկիւնոցիս մէջ հաստատուած աշաբուսութեան ճիւղը, որուն արդիւնքը պիտի տեսնենք հետագայ տեղեկագրոց առաջնոյն մէջ:

Տեղեկագիր բժշկական

Պատիւ ունիմ ներկայացնել Մեծարգոյ Հոգաբարձութեան, Անկիւնոցի 1898 տարւոյ բժշկական տեղեկագիրը:

Ա. Հիւանդանոց

Ցարդոյն մէջ ընդունելոցն 147 հիւանդներ, որը հետեւեալ կարգաւ կը բաժնուին:

Իգական սեռէ 53, որոնցմէ բուժեալք	12
բարուցեալք	20
վախճանեալք	21
Արական սեռէ 94, որոնցմէ բուժեալք	45
բարուցեալք	22
վախճանեալք	27
բժշկական . . .	147

Այս հաշւէն կը տեսնուի որ հիւանդ աւանդ թիւր զթիւէ կրկնապատկին է կանանց թուոյն, բուժեալ հիւանդաց թիւն է 57, այսինքն 100ին 40:

Հիւանդութեանց նուազագիւ կարգով անուանեն են հետեւեալք, Թորքասապ (Broncopneumonie grippale), Կուպիթ (Pleurésie), Ջերմ (Fievre intermittante), Ստուճըսի եւ ուղեղի հիւանդութիւնք (Affections gastro-intestinales):

Բարուցեալ հիւանդաց թիւն է 42, այսինքն 100ին 30: Այս հիւանդութեանց նուազագիւ կարգաւ անուններն են Թորքաթ (Phtisie pulmonaire), Ժանդընդութիւն (Asthme), Ժուճի եւ ուղեղի հիւանդութիւնք (Affections de la moelle et du cerveau) եւ այլն:

Վախճանելոց թիւը թէ իդական սեռէ եւ թէ արական սեռէ կը հասնի 48ի, այսինքն 100ին գրեթէ 33: Վախճանելոց այս թիւը միւս հիւանդանոցաց վախճանելոց թուոյն հետ արդդամամբ շատ աւելի է. բայց այս տարբերութեան բացատրութիւնը պարզ է: Հիւանդանոցս ստիպեալ է ընդունել ոչ եւ տանաւածանք աստիճանի հասած հիւանդներ, մինչեւ իսկ հոգեվարք: Դամապէն Անկիւնոցս չէ կարող մերժել անբուժելի հիւանդութեանք աստապողները: Ի վերայ այս ամենայնի Անկիւնոցս մինչեւ այս վերջին տարիներս նկատուած ըլլալով Մեծարգոյ Հաստատութիւնէն իբրեւ վերջին կայսրան անդառնալով ծամբորդութեան հոն կը լքուի անյոյս, անբուժելի եւ ամենածանր հիւանդները: Պէտք ենք նաեւ ըսել որ, մեր վախճանելոց զթիւէ մեծամասնութիւնը կը բաղկանայ Անկիւնոցիս ծերանոցին եւ Պատանոցին պատասխարեալներն: Վախճանեալ արագք միջին տարիքն է 66, եւ կանանց միջին տարիքն է 75 եւ հիւանդութիւնն է ընդհանրապէս Թորքաթ եւ հիւանդանոց:

Բ. Ծերանոցի պատասխարեալք:

Ցարդոյն մէջ պատասխարեալ պառուանց թիւն էր 13, ասոնցմէ 3ը Անկիւնոցէս ելած են այլ եւ այլ պատճառներով, 3ը վախճանեալ, եւ մին խելագարեալ: Այս 13 պառուանքէն 6ը դադարացի են, մէկը Պրուսացի եւ մնացեալք Կ.Պոլսեցի: Ամենէն հին պատասխարեալ դադարացի են, եւ կը դառնուի Անկիւնոցիս մէջ 1891էն ի վեր: Իսկ ծերոց թիւն էր 38, ասոնցմէ երկուքը ելած են Անկիւնոցէս, 13ը վախճանած: Ամենէն հին պատասխարեալ ծերն Կ.Պոլսեցի են, եւ կը պատասխարուի Անկիւնոցիս մէջ 1891էն ի վեր: Այս 38 ծերերուն 6ը Գաղապացի են, 2ը Եւրոպացի, մնացեալք Կ.Պոլսեցի:

Գ. Յիմարանոց:

Յիմար կանանց թիւն էր 18, ասոնցմէ 3ը լուսնոտ (Epileptique): Ցարդոյն մէջ մէկ յիմար բուժուցեալ եւ ելաւ, մէկ լուսնոտ բար-

ւորեցան եւ ելաւ, եւ մէկ խելագար վախճանեցաւ: Անկեանոցիս մէջ պատապարտող երիցադպն յիմարն է Կ. Պոլսեցի, ուր իր գանուի 1870էն ի վեր: Յիմարներն ճը Գաղատայի են, 17 պառնական գաւառներն եւ ճը Կ. Պոլսեցի: Իսկ արանց թիւն էր 33, ասոնցմէ 4ը Գաղատայի, 13ը այլ եւ այլ գաւառներէ եւ ձեռքեցաւ Կ. Պոլսեցի են: Յարույս մէջ 33 յիմարներն մին բոշկուեցաւ, 4ը վախճանեցան, եւ ձեռքեցաւ զարմանի եւ ինամոց ներքեւ են: Երիցադպն յիմար Գաղատայի է եւ իր պատապարտի Անկեանոցիս մէջ 1869էն ի վեր:

Գ. Արտաբէն Այցելութիւնք:

Անկեանոցիս բոշկապար շարաթը երկու անգամ, այսինքն շորթշարթի եւ շարաթ ձրիարար կը դարձանէ իրեն գիմոզ աղքատ հիւանդներ: Յարույս մէջ այցելած են 400 կէն, 280 այր եւ 160 տղայ հիւանդք: Այսպեալ աղքատաց զեղազիրքը, ըստ պիտոյից ձրիարար կը պատրաստուին Անկեանոցիս Գեղարանին մէջ. (տե՛ս անգ. էջ 122):

Ե. Աշարուժեալք:

Աչաց հիւանդութեանց համար Անկեանոցիս ունի յատուկ մասնազու բոշիկ մեծաճամբա Տըթթ. Աճեման Պէլը, որ անձնանուիրաբար եւ մարգասիրական ոգւով կ'այցելէ Հիւանդանոցս, ըստ պիտոյից արտաբէն հիւանդաց համար եւս, շարաթը մէկ երկու անգամ: Յարույս մէջ 8 հիւանդք դարմանուած են, որք այլ եւ այլ գործողութիւններ կրելով բուժեալ կամ բարւոքեալ ելած են Հիւանդանոցէս: Պարտիկը այս առթիւ մեր խորին շնորհակալիքը մատուցանել վսեմ. Տըթթ. Պէլին, եւ վստահ եմք որ առաջիկայ տարւոյս մէջ ալ պիտի շարունակէ անձնանուիրաբար ինամոյ մեր պատու պարեալ աղքատները:

Զ. Առաջարկութիւնք:

Այս համառօտ տեղեկագրով Մեծարգոյ Հոգաբարձութիւնը զիտով պիտի ըլլայ Անկեանոցիս տարեկան ընդհանուր վիճակին, որ գործողաբար Գոհացողիչ չէ բազմամամբ օտարապէի համանուն հաստատութեանց: Վստահ եմք որ Պատուարժան եւ Զանաւեր Հոգաբարձութիւնը ընդ փոյթ ի նկատ առնելով հետեւեալ առաջարկութիւնները եւ հրաւիրելով անպակել եւ աղքատներն աւարտաբար աշակցութիւնը եւ օգնութիւնը՝ պիտի յաջողի ի գործ դնել այն ամեն բարեփոխութիւններն, որք անհրաժեշտ են մարգասիրական հաստատութեան համար:

1. Ընդհանուր նորոգութիւն Անկեանոցիս, մասնաւորապէս անոր օրահիշ եւ սենեկաց տախտակամած յատակներուն:

2. Արանց եւ կանանց յիմարանոցներու վերաշինումը եւ ընդարձակումը:

3. Թիմարներուն համար Զբոստանային օրահիշ (Salle d'hydrothérapie) եւ անոնց մասնազու բոշիկ մը:

4. Հակամեխիլէ Զեռուցիլ գործիքի (E-tuve à desinfection) մը գնում:

5. Գթութեան Բոյրեր Հիւանդանոցս հրաւիրել եւ անոնց յանձնել ընդհանուր հիւանդաց հսկողութիւնը, օրահիշներուն եւ անկողնիներուն մաքրութիւնն եւ կարգադրութիւնը:

Յոյս մեծ ունիմ որ գալ տարուան տեղեկագրոյս մէջ այս բարեփոխութիւնը, եթէ ոչ ամբողջովն, գէթ մեծաւ մասամբ գործադրուած պիտի կարենամք տեսնել եւ ուրախութեամբ ողջունել:

ՅՈՒՆԻՍԿՈ 20.04.09

Տեղեկագիր վերաբուժական ճիւղին

1898 Յունուար — Գեղեկանքներ 31

Մեծարգոյ Հոգաբարձու Տեսարք

Ս. Թակուր Անկեանոցի

1897 փետր. 20ին էր որ նախորդ Պատուարժան Հոգաբարձութեան որոշմամբ Ս. Թակուրայ Անկեանոցի վերաբուժական ճիւղին բոշկապետութեան պաշտօնին կոչուեցայ: Արգայն ժամանակէն ի վեր ամեն շաբթի ի գործ դրած եմ նախ հիւանդաց օգտակար ըլլալու եւ յետոյ ժողովրդեան վստահութեան արժանալու: Սոյն տեղեկագրոյս միջոցաւ իմ խորհրդածութիւններս յերեւան բերել առաջ՝ կը փութամ ի գործ դրուած աշխատութեանց արդիւնքը մատուցանել:

1898 տարւոյ շրջանին մէջ դարմանած եմ 58 հիւանդ, որոնց 32ը այր, 21ը կին եւ 5ը տղայ (երկու սեռէ) որք հետեւեալ կերպով կը բաժնուին:

Արական սեռէ 32: Գործողութիւն կրելով բոշկեալք	24
Առանց գործողութեան բոշկեալք	3
Գործողութիւն կրելով բարւոքեալք	2
Առանց գործողութեան	2
Գործողութիւն կրելով մեռեալ	1
Իգական սեռէ 21: Գործողութիւն կրելով բոշկեալք	16
Առանց գործողութեան բոշկեալք	1
Գործողութիւն կրելով բարւոքեալք	1
Առանց գործողութեան	1
Գործողութիւն կրելով մեռեալ	1
Առանց գործողութեան	1
Տղայք գործողութիւն կրելով բոշկեալք	5
բոլորագրակ	58

Անշուշտ Մեծարգոյ Տեսարք անբաւական պիտի գտնէք հիւանդներու եւ կատարուած գործողութեանց թիւը, բայց յոյս մեծ ունիմ որ Չեր անխնդ աշխատութեանց շնորհիւ պիտի յաջողինք քիչ ժամանակի մէջ ունենալ վերա-

բուժական առելն ընդարձակ որոհ մը, որով պիտի կարենամք մոյլել Վատարապարիս մէջ գտնուած համառու հաստատութեանց հետ՝ ազգային տնտեսական կարողութեան ներքին սահմանին մէջ, եւ այս բանիս յաւելումներն ահաւառ է, եթէ Անկիւնոցի ներկայ կարգապահութիւնը շարունակէ, զոտաւան կարգի պատասխարեց համար հետհետեւ օրինաւոր բաժանումներ տեղի ունենան եւ գլխաւոր թղթերը ստանձնեն հիւանդապահութեան ամենափափուկ պայտօնը: Հանրային այսպիսի հաստատութիւններ տաւոց կարգապահութեան կարելի չէ կառավարել, եւ զոտաւան կարգի խնւուած պատասխարելը բժշկական տեսակետով հարկ է բաժնուած եւ անկատ ապրիս իրարմէ: Ս. Յարապար Անկիւնոցիին հիմնարկութեան ժամանակ գրեթէ ամեն տեղ, ամեն երկիր կեդրոնացման գրութիւն ընդունուած էր, բայց այսօր փաթեթի փութը եւ առողջապահութեան յաւելումներն հիւանդապարիս պիտի գտնուէր կը պահանջէ: Ուրեմն, հարկ է որ մենք ալ բարեփոխենք մեր ընթացքը:

Մեր նախահարը բարեացակամութիւն ունէր գէթ թշուառները ընդարձակ, օգուտ հոյեալ վնայ ապրեցնելու, մինչեւ մեր Անկիւնոցիին շուրջ գտնուած այսման շէնքերը ու պատերը կ'արգելէր յախախտութեան առաւելումներն ապրեցնելու օրը: Սպասելով հանդերձ որ ազգային բարեբարեւոր գիտութեանց արդի պահանջմանց համաձայն տիպար հիւանդանոց մը կանգնեն Անկիւնոցիին կից ընդարձակ եւ օգուտ պարտկին մէջ, զոնէ զոյն ծառայեցնենք առ ժամանակ հիւանդաց օգուտութեան եւ զբոսանաց:

Այս հաստատութիւնը ամեն կարգի պատասխարեցնելուն համար փրկութեան ճշմարիտ ապաստանարան մը պէտք է համարուի, որովհետեւ շատեր հոն գիտած եւ իրենց կատարելաւ առողջութիւնը գտնելով մեկնած են: Եւ եթէ սմարն, եւ այս ալ սակաւք թուով, կամ անձամբ կամ լրագրեցնելու միջոցաւ երեքնմ տեղահոսութիւն յայտնած են, ասիկայ պատահած է ոչ թէ վարչութեան, այլ գրամական տագնապներու պատճառաւ միայն: Քանզի եթէ այս վարչէ մարմին անձնուէր չըլլայ, եւ հաստատութեան ծառայելու մասնաւոր հանձնք ու սեր չունենայ, ինչու այս զբաղմունքով ի զուր ժամակաւ ապիսի ըլլար: Գուրկէ է խմբագրական քննադատութիւններ օրինաւոր եւ խղճաւոր լինի, զի արթուն եւ ուշադիր կը բռնէ վարչութիւնը եւ գործող մարմինը, եւ բարեբանն ու զարգացման միջոց օգտամտոյց կ'ըլլայ:

Խորհրդածութեանցս վերջ պիտի տամ լրբարանի եւ բաղիւրի խոյնիւրդով որ մեծ կարեւորութիւն ունին այս քարավերթի ժամանակներու մէջ, ոչ միայն իրեն նիւթական մաքրութեան՝ այլ եւ իրեն մասնաւոր առողջապահական զարման մը գործածուելով: Ուստի հարկ կը սեպեմ ուշադրութիւն հրահրել հի-

ւանդանոցին բազանեաց անյարմար եւ անբաւական վիճակին վրայ: Վասն զի իրենց այսժամանակներու մէջ շնն համապատասխանութիւն կան պահանջմանց, որով պէտք է զանաւոր այնպիսի վիճակի մը վերածել, որ իւրաքանչիւր հիւանդ գիւրդութիւն ունենայ լրբարանը նոյն իսկ ամէն օր ի պահանջել հարկին:

Քիչ յառաջ հիւանդաց թուոյն վրայ խոսած պահուած մեծանշան հիւանդանոցութիւնը ներկայացուցած էի. արդ եթէ նկատողութեան անունը որ մեզի գիտնող հիւանդները ընդհանրապէս ծանր եւ տանջ հոգեւոր վիճակի մէջ կու գան, մինչեւ ուրիշ հիւանդանոցներ այս տեսակ հիւանդներ չեն ընդունիր, այն ատեն յիշեալ թիւը պէտք չէ մեծ համարուի, եւ մեծանշանութեան թուոյն զանաւորութիւնը առանց վարանելու կը վերադարձ վարչութեան ինքնուրուիւրութեան, որ այնքան փոյթի ի մէջ կ'առնու, որպէս զի բան մը չպակար հիւանդներուն դարմանուելու մասին: Ինչ որ կարգադրած եմ իրեն կերպուած, թնկալեցին կամ հազուադիւրս, ինչ արտադր կարգի գործիք որ պահանջած եմ, ամենայն փութով եւ ճշգրտէն մատակարարուած է ինն, որուն համար պէտք է որ եւ իսկ անձամբ յայտնու հիւանդաց խորին շնորհակալիցս յայտնել փութամ, թէ վարչութեան եւ թէ մեր հասարակութեան բարեացակամութեան որ չի զանդար որ եւ զհոգեւորութիւն: Այս առթիւն կ'ուզեմ յառաջբերել իմ կատարած մէկ քանի գործողութեանց վրայ փոքրիկ տեղեկութիւն մը:

1. Հինգ արբանի կիպակի (Fistule anale) գործողութիւններ կատարուեցան օտարուեցան Լուրդութեանք, Ժաւայս գործողութեանց մէջ բնու, փնչպէս ունեւր կ'ընէին, Բազէնի կրպակ գործիք չեմ գործածած:

2. Մէկ թթախտաբուժութիւն (Hémorrhoides) կատարուեցաւ 33 տարեկան կնոջ մը վնայ, որ երեք շուր տարեի ի վեր արիւն կը հոսեցնէր, եւ որով բոլորակն ուժամաք եղած էր: Այս գործողութիւնն յաւելուեցաւ Բազէնի գործիքով:

3. Մէկ ներքին փոփոխութեան միջանցահաստութիւն (Urethrotomie interne) 50 տարեկան Գրուսացի հիւանդի մը վնայ կատարուեցաւ, որ ամենաշուտ կեպակով բժշկուեցաւ:

4. Մէկ պոլիպոզահաստութիւն ռեզպային (Allation de polypes):

5. Աղեթափութեան (Hernie) տառապող երկու հիւանդներու վնայ գործողութիւն կատարուեցաւ, որոնց մին բոլորովին բժշկուեցաւ եւ միւր մեռաւ, վասն զի աղեթները արգէն բորբոքած եւ փռած էին:

6. Երկու անգամ վնի խոյլական (Adenite cervicale), եւ երեք անգամ ցայլական կեղծատալ (Adenite inguinale) դարմանուեցան յաւելութեամբ:

7. Մէկ սրունդի անգամահաստութիւն (Amputation de la jambe) եղաւ 70 տարե-

կան մարդու մը վրայ, որ կը տառապէր ոտքի փտախտէ:

8. Երկու հիւանդք, մին 70 եւ միւսն 75 տարեկան, որ յառաջագիշի անդադարեղութիւն (Hypertrophie de la prostate) ունէին, յետ գործողութեան շուտ բարւոյցեցան:

9. Զորս արգանդաբերում (Curetage utérin) կատարուեցաւ զանազան կարգի բորբոքմանց համար, որ յաւաճել եկած էին ծննդաբերութենէ, եւ բնաւ մահ չկատարուեցաւ:

10. Երկու կանանց, մէկը 60 եւ միւսը 27 տարեկան, ախտորոշման երկխմուները (Rein) հանած եւ մամնայն յաղորդութեանը, եւ միշտեւ այժմ ողջ առողջ են: Ցարուք կնկան երկխմուն խոշոր, այլակերպ եւ հատագործւած քար մը կը պարունակէր, զոր տակաւին առիթն չունեցայ ներկայացնելու կայսերական բժշկական ժողովին:

11. Մէկ խախտած ստորին կրակի (Luxation du maxillaire inférieur) 70 տարեկան կնոջ մը վրայ, զոր օտայած էր շատախօսութեան մը միջոցին բերանը մեծ մը բանալէն:

12. Մէկ ստիճահատութեան (Ablation de la mamelle) վան կարկինոսի (Cancer) որ կատարուեցաւ 38 տարեկան Պրուսայի կնոջ մը վրան:

13. Գուստանային Բշտակ (Kiste de l'Ovaire) ունեցող Բերայի օրերգի մը վրայ գործողութիւն կատարեցին եւ կատարելապէս բժշկուեցաւ: Այս Բշտակը իւր ամբողջութեամբ երեք օխայէն աւելի կը կռուէր եւ այլն էր այլն:

Զեմ կրնաք տեղեկագիրս վերջանցել առանց կրկին յիշեցնելու որ հաստատութեան բարեգումն ամենակարեւոր կէտն է ընդհանրութեան վստահութիւնը շահել, որովհետեւ մինչեւ որ առական գաղափարներն չստանա-հարուին, իբրեւ թէ օտար հիւանդանոցներն լաւագոյն ըլլան, կարելի չէ պայտուած վախճանին հասնել: Եւ համարուած եւ որ, վարչութիւնը պիտի յաջողի ձեռք բերելու, ինչպէս արդէն իսկ մասամբ յաջողած է, այս փափաքելի վստահութիւնը, եւ մենք, եւ եւ ընկերակիցս բժշկապետ Յօրթ: Զօհրապ մերովանն պիտի օժանդակենք Պատկաւունք վարչութեան շնորհքուն յաջողութեանը:

Գուստայի է ինձ դաւ տարի աւելի մանրամասն եւ ծոխ տեղեկագիրք մը մատուցանել այս մարտարական հաստատութեան վրայ, որուն այնքան խնամ տարած են մեր նախորդներն ողբացալին Յօրթ: Նորիճան եւ Բազմադպիւն բարեպաշտու Նափիլեան փայտ:

Ներկայ տեղեկագրոյս համառօտ բովանդակութեան մասին Պատկաւունք վարչութեան ներդաշմուրթիւնը կը հայցեմ: Վասն զի, ինչպէս յայտն է, Ս. Փրէշի եւ Ս. Գալիքայ կրկին հիւանդանոցներուն միանգամայն վերաբուժական խնամոց ծանրագնաւութիւնն ստանձնած ըլլալով՝ ժամանակիս արեւոտ տղամարդութենէն է հարկէ զրկուած կը պատահի:

ՏՕՔԹ. Մ. ԶԱՐԴԱՐ

Այս տեղեկագրերը կը գտնուին 1898 տարւոյ Ազգ. վարչութենէ վաւերացեալ եւ տպագրութեամբ հրատարակեալ հայուեցուցակին մէջ, ուր կը տեսնուին մուտք դահեկան 365,069. Ելք 322,166 եւ արկեղ մէջ աւելցած գումար 6129. պահանջ 36,774: Առանձինն նշանակութեան արժանի է սակալի հայուեցուցակի մուտքին մէջ տեսնուած դահեկան 56,059. 75 գումարը, որ գոյացած է թոշակաւոր պատասպարեալներէն, որուն նմանը ցարդ չէ տեսնուած, ինչ որ ապացոյց է ոչ միայն հաստատութեան բարեկարգ վիճակին եւ յառաջագիտութեան, այլ եւ անոր բժշկական մարմնոյ մատուցած ճարտար եւ անձնուէր խնամոց: Անկեանոցի բժշկապետ Դոկտ. Գ. Զօհրապի եւ վերաբուժապետ Դոկտ. Մ. Զարգարի արդիւնքը գնահատելի է յիշուի այս մասին:

Ինչպէս յայտն է մեր ընթերցողաց հասարակութեան արհեստանոց մը բանալու մտադրութիւնը Անկեանոցի մէջ (տես անդէք 186), ինչ որ այս անգամ Հոգաբարձութեան ձեռք մասամբ մը կը գործադրուի կոշկակաբանութիւն մը հաստատութեամբ 1899 տարւոյն սկիզբը: Բայց այս ձեռնարկը գծախառնաբար վեց տարի կեանք ունենալ ետք խափանուած է մահուամբ Սամանձեանի:

Ազգ. վարչութիւնը, պատասխանելով Հոգաբարձուաց Գուստար 24ի գրութեան կրեթթէ Տիկին Ռեճինա Քանթարի 300 օամ. ոսկի նուէրը կ'ընտանուի իր յարակից պայմաններով, եթէ այն գումարին վրայ հաճի 56 ոսկի եւ 61 դահեկան եւս յաւելուլ, որուն կը յօժարի նուիրատուն: Պայմաններն են, յիշեալ գումարով էլ մնացող փողոցին վրայ միւսներուն նման տուն մը շինել, եւ անոր եկամուտէն նախ եւ առաջ նորոգութեանց, պետական եւ ապահովագրական ծախքերն հոգալ: Մնացածին երեք մասին մէկը գործածել հանգուցեալ Քանթար Օղլու Պետրոսի զստերաց, հանգուցեալ Քանթար Քաթիկիզի եւ Մարմայ, իւրաքանչիւրին հոգւոյն համար առանձինն, ամիսը մէկ թիւ պատարագ մատուցանել տալ, այսինքն տարին 24 պատարագ: Այս ծախքերէն աւելցածին դարձեալ երեք մասին մէկը իրեն (այսինքն Տիկին Ռեճինայի) տալ մինչեւ ցմահ, որմէ ետքը շինուելիք տունին ամբողջ եկամուտը Ս. Գալիքայ յատկացնել եւ իրեն հոգւոյն համար եւս ամիսը մէկ թիւ պատարագ զուրցնել տալ, ընդ ամենը 36 պատարագ, զորս յանձնառու պիտի

9*

ընայ Անկելանոցիս արկղը ամեն տարի անխափան տալ մատուցանել: Մենդուհուի նաեւ Հիմանեան Յովսէփի Սահակայ որդւոյն նուէրը, որ եւ փայտաշէն տուն մը ի շարք փողոց զանկաղի թիւ 39 եւ 165 Օսմ. ոսկի ցկեանս վայելելու պայմանաւ անոր վարձքը եւ տոհմը, եւ մահուանէ ետքը տարին ձայնաւոր պատարագ եւ Հոգեհանգստեան պաշտօն մը կատարելու, եւ գերեզմանին վրայ տապանաքար մը դնելու երկամեայ վանդակապատով:

Իսկ փետր. 16 թուականաւ ինքրուած հրամանին գալով՝ որ ի Պերսի Պէքեար փողոց թիւ 7 քայաշէն տունը ծախելու, Ազգ. վըճ. ժողովը զանազան պատճառներով կը մերժէ զայն, բայց կ'արտեն վաճառել 20 Օսմ. ոսկով ի ֆերի-Քէյ 210 կանգուն գետինը, շնորհեալ դերձակ Կարապետի ամուսին Թագուհիէն, ազգաբարերւով միանգամայն պահել այս կարգի բացառիկ հատկութիւնը, եւ գիտակցութեամբ Ազգ. վարչութեան կարեւոր շէնքի մը կառուցման յատկացնել Ս. Յակոբայ Մուրաթլու Լիֆլին վրայ, երբ բաւական գումար մը գոյանայ, Կարտուն եւ նաեւ Անկելանոցիս վերաբուժարան տրուել: Ս. Զարգարին տարին 500 Փրանք տալ ըսելով՝ ոչ իրեւ վարձատրութիւն իր բազմադրոյն ծառայութեանց, զոր երբեք չենք կրնար փոխարինել, այլ իրեւ ծախք երթեւեկի:

Այս նիւթական յարողութեանց կը հետեւին բարոյականներն ալ. Դոկտ. Giulio Mongiri մասնագէտ յիմարարութ Սեպտ. 1 թուական նամակաւ փափագ կը յայտնէ ձրի ծառայելու Անկելանոցիս, ինչ որ կ'ընդունուի վարչականին հաւանութեամբ: Իսկ Դոկտ. Տիմոթէոս Ֆրանչեսկոն որ Բարեխիշտակ Դոկտ. Գրիգոր Անանեանի կտակէն օժտուելով (տես անդէ՛ք 124) Թրիեսթի մէջ բժշկութեան վկայագիր առած է, Դոկտ. 19 թուականաւ կը ինքրի նշնայէն ձրի ծառայել Անկելանոցիս, եւ այսու փոխարինել զուցէ Ազգէն վայելած քարերը: Այս ինքիրքն ալ կ'ընդունուի վարչականէն զոհուանակութիւն յայտնելով անոր երախտագիտական զգացմանց. (դւ. Ս. ԵՎ. եւ Պտր. թղթ.):

Այս տարի Անկելանոցիս մէջ տեղի ունեցած 58 վերաբուժական դործողութիւններէն կատարած են. —

Դոկտ. Մ. Զարգար	42
» Զամպուր Օղլու	1
» ձէֆլ ֓աշա	1
» Արզուման	4

Դոկտ. Անթրիպա	1
» Նաթիլէ ֓աշա	2
» Եաղուպեան	7

Սամանձեան Գարրիէլ 1900 Յունուար 8 առ Աստուած փոխուելով՝ Ազգ. վըճ. ժողովը կը փութայ փետր. 14 թուական նամակաւ յիշեցնել Ս. Յակոբայ Հոգաբարձութեան, որ սկսի կատարել իր պարտականութիւնը, ըսել տալ աւարտ թիւ պատարագ մը: Մի եւ նոյն նամակաւ կ'արտեն, զազարմամբ նախկին պատճառաց, Պէքեար փողոցի տան վաճառումը 1279 Օսմ. ոսկով առանց ծանրացնելու միջորդի իրաւունքը Անկելանոցիս վրայ: Մարտ 15ին ալ կը գրէ ընդունելի Դոկտ. Ե. Ոսկեանը իրեն տեղապահ Անկելանոցիս Բժշկապետ Դոկտ. Գ. Զոհրապի, որ ժամանակ մը պիտի բացափայէր Մայրաքաղաքէս: Իսկ նկատմամբ Տիկին Ֆիլոմէնայի, ամուսին հանգուցեալ Սինանեան Պետրոսի եւ աւանդ որդւոյն Գեորգայ 1200 կանգուն տարածութեամբ ի ֆերի-Քէյ քէհատանէ փողոց թիւ 69 գետինը՝ զոր Ս. Յակոբայ նուիրել կուզէին, պայմանաւ որ Հոգաբարձութիւնը ծախէ զայն եւ անոր փոխարժէքովը գնէ տուն մը, որուն վարձքը Սինանեան վայելեն ցկեանս, ստանձնելով անոր նորոգութիւնը եւ պետական տուրքը, եւ ապահովագրութիւնը Անկելանոցիս թողով, եւ թէ՛ այրի, փոխարժէքը ինքը գանձէ եւ վերստին կառուի՞ն՝ կը գրէ Հոգաբարձուաց հաղորդել Տիկին Ֆիլոմէնայի անձամբ ծախել յիշեալ երկիրը, եւ գինը ձեռք անցնելէ ետքը խորհիլ պայմանաց վրայ, Հոկտ. 22 պաշտօնագրովն ալ կ'արտեն վաճառել 100 կանգուն գետինը ի Պերսի Կէօլպաշը թաղ Տէր Լուսիկ փողոց թիւ 34, եւ Սինանեան Նիկտառի 216 կանգուն գետինը ի ֆերի-Քէյ Հանըմ Օղլու փողոց թիւ 3, կանգունը 30 դահկան ոսկեգումով, յանձնարարելով միանգամայն ատենց մէկ գոյացած ստակէն վերադարձնել Էվթիմիաց Թէմաթի Անկելանոցիս նուիրած գումարը, զոր այժմ եւ կը պահանջէր, եւ մնացածը պահել մինչեւ որ Ազգ. վըճ. ժողովը այլազգ տնօրինէ (դւ. Ս. ԵՎ. եւ Պտր. թղթ.):

Հոգաբարձութեանս եռամեայ պաշտօնավարութեան շընթաք աւարտած ըլլալով՝ ի դիմաց Ազգ. վարչութեան հետեւեալը կուղղուի Ս. Յակոբայ Հոգաբարձութեան Ատենապետին:

Գերլորդելի Տէր

Բառնարատ Ծ. Ա. Սամանձեան

Ազգ. կանոնադրութեան տրամադրութեան համեմատ Երեսփոխանական ժողովոյ

քուէարկութեամբ վերականգնուելով նոր վարչական ժողովը անոր առաջին պարտաւորութիւն էր, ինչպէս յայտնի է, վերահաստատել կամ վերանորոգել մասնական խորհուրդներն եւս նորիպէս ըստ արամագրութեան Ազգ. կառնահարկութեան:

Գալով Գեղի, Տէր Անկելանոցիւ Հոգաբարձութեան՝ նախ այսպիսի բարեպատեհ առաւելութիւն առանձին պարտական էր զգալը զմեզ համալսութեամբ վարչական ժողովոյ յայտնել Ձեզ մեր խորին նորահայտութիւնները Ձեր մատուցած եռամսայ անգին ծառայութեանց եւ փութաբան ու արդիւնալից վաստակոց համար, որոնք ի հաւատարմի կը վերահաստատեմք զՁեզ հաճութեամբ Հոգաբարձութեանց ատենապետութեան կարեւոր պաշտաման մէջ, հաստատութեամբ նորիպէս Ձեր միւս պատուական ընկերակցայ ի Հոգաբարձութեան Անկելանոցիւ, եւ կը խնդրեմք որ հաճիք տառննել զայն վերադիմել եւ անով գոհանալութիւն պատճառել մեզ վարչական ժողովոյ եւ բոլորական Հասարակութեան, որ քաջ իսկ գնահատած է Ձեր աշխատակեանց արդիւնքը եւ Անկելանոցիւ ներկայ բարեկարգ ու բարգաւաճ վիճակը:

Մնամք Հայրապետական օրհնութեամբ

Բերս, 1 Յունուար 1901:

Պօղոս Պետրոս ԺԱ. Էմանուէլեան
կաթմ. Պաարխար կաթմ. Կաթմ. Կաթմ.

Նամակիս պարունակութիւնը Հոգաբարձութեան ամենքը կ'ընդունին բացի երկուքէն՝ որ չեն ուզեր այլ եւս շարունակել իրենց պաշտօնը:

Փետր. 21/6 Մարտ նամակա ստորագրեալ Առնապետեան եւ Առնապետեան կը ծանուցուի Ազգ. վարչութեան՝ որ Սինանեան Տիկին Գիւրգենայի եւ անոր որդւոյն Գեորգի 1200 կարգու գետինը ըստ արամագրութեան վարչականին իրենցմէ պիտի ծախուի եւ փոխարժէքը մինչեւ որ գնելու յարմար տուն մը գտնուի, գրամատուն մը պիտի դրուի յանուն Տիկին Լիսի Հեգիմեանի՝ ձեռքէն մոլվազաւս մը առնելով:

Նոյն ամսոյ 24ին ալ Հեգիմեան Պօղոս եւ Երազեան Միհրան ներկայանալով Ազգ. վարչութեան՝ կը ծանուցանեն հերոս Անկելանոցի բժշկապետին եւ վիրաբուժագետին մէջ ծագած ստորաձայնութիւնը, Առաջինը կը պնդէր որ վիրաբուժական գործողութեան ենթարկուած հիւանդին դարմանը իրեն կը վերաբերի, իսկ երկրորդը հակառակը կը պաշտպանէր: Ազգ. վարչութիւնը կը յանձնարարէ ի գիր հաստատել զայս, որպէս զի դարման մատուցուի:

Եւ իրօք ալ Նոյն օրը այս իմաստով կը դրուի ուղղակի Առնապետին, որուն չորս օր ետքը հետեւեալ պատասխանը կը տրուի:

ԱՆԿԵԼԱՆՈՑ Կ. ՀԱՅՈՑ

Ս. ՅԱՆՎԱՐ

Բանկալթի, Փետր. 28/13 Մարտ 1901,

Առնապետին Գեորգիանի Հոգեւոր Տէր
Նախագահ Պատկառելի վարչական ժողովոյ

Ընդունեցանք Ձեր Երանութեան Փետր. 24 թուակիր պաշտօնագիրն, որով կը յանձնարարէք մեզ գրաւորապէս հայրդգել առ վարչական Անկելանոցի բժշկական խորհրդոյ մասին այն ամէն պէտք եղած տեղեկութիւններն, իրոք պաշտօնագրաւ բերանացի տուին ի գիմարտ խորհրդոյ Մեծաշուք Տէրեր Ներսիսեան Միհրան եւ Հեգիմեան Պօղոս Էֆէնտինները, համարուած ըլլալով որ շատ անգամ յաւաքոյն արդիւնք կ'ունենան բերանացի քան գրաւոր յայտարարութիւնը:

Ինչորքը շատ անգամներ խորհրդածութեանց նիւթ եղած է նախորդ վարչական ժողովին մէջ, բնականաբար խորհրդոյ կողման պէտք եղած տեղեկութիւններն առած ըլլալէ ետքը, Նախորդ վարչականին այս խնդրոց մասին բրած խորհրդակցութեանց եւ որոշմանց արձանագրութիւնները անգամ մը անգամ անցուցիւ կը խնդրեմք, պիտի տեսնուի որ խնդրը հին է եւ բաւական ըստբանաւած: Կրկնութիւն մը միայն պէտք է համարել մեր այս տեղեկագրոց պարունակութիւնը:

Անկելանոցս իւր հիմնարկութեան ի վեր ունեցած է միշտ եւ ունի յատուկ բժիշկ մը, իր արուեստին սահմանին մէջ Անկելանոցի պիտոյքը հոգաւոր համար, եւ այս բժիշկը Անկելանոցին խորհրդոյ անգամ չըլլալով հանգրծի ի պաշտօնէն: Հարկին իրեն խորհրդակցութեանց ներկայ գտնուիլ կրնայ առանց քուէ ունենալու, զայս այսպէս հաստատած է մեր Ազգային կանոնագրութեան 44 յօդուածն ալ: Ուրեմն Անկելանոցի յատուկ բժիշկին եղած է, եւ պէտք է ըլլայ միշտ պատասխանատու բժշկական ամեն գործառնութեանց հանդէպ խորհրդոյ եւ վարչականին: Գամանակաւ վերաբուժական գործառնութիւններն իսկ Անկելանոցին յատուկ բժիշկը կը կատարէ եղբւր, բայց վերջերս, ըստ խնդրանք լուսաւորէ Հոգեւոր Տէրան, բարձրագոյն տիւ Տեղաւոր Նախկին Գալա տղն պաշտօնը ստանձնել է անձնուիրաբար, եւ բաւական հարձակել եւ իւր տեղը առաջարկել է վիրաբուժ գիմարտը Տեղաւոր Տեղաւոր Գալա տղն ուրեմն, որ ընդունուել է, եւ քանի մը տարիներ պաշտօնավարելէ յետոյ՝ հրաժարուել հաստատական պատճառաւ հրաժարել եւ իւր տեղը առաջարկել է վիրաբուժ գիմարտը Տեղաւոր Տեղաւոր Գալա տղն ուրեմն, որ ընդունուել է, եւ քանի մը տարիներ պաշտօնավարելէ յետոյ՝ հրաժարուել եւ անցը ուրիշներ յաւրդել են, մինչեւ որ կրկին անգամ յիշեալ Տեղաւոր Տեղաւոր Գալա տղն ստանձ-

ներ եւ այն պաշտօնը, զոր կը վարէ մինչեւ յայտնի:

Ինչպէս կը տեսնուի Անկելանոց իր յառուի բոխիկէն զատ՝ ճարտար վերաբոյժի մ'ալ պէտք ունի, ինչպէս պէտք ունի նաեւ յիմարարժ, արհմարդ, առաջնորդ եւ այլ եւ այլ մասնագէտներու, որոնք ի հարկին կ'այլայլեն եւ կը դարձանեն անձնութեամբ իրենց մասնագիտութեան վերաբերեալ հիւանդներն, մի միայն վերաբոյժ Տգթթօր Զարգարեան է ֆէնտին պաշտօնագետ ճանչցուած ըլլալով վարչականի կողմանէ:

Կարծեմք տարուիլ չլիցըներ որ Անկելանոցի յաճախեալ վերաբոյժ եւ միւս մասնագէտ բոխիկներն չեն պատասխանատու Անկելանոցի ընդհանուր բժշկական գործառնութեանց, քանի որ ըստ Ազգ. Կանոնագրութեան շունչն ուղղակի յարաբերութիւն խորհրդոյն հետ եւ ոչ ալ իրաւունք խորհրդակցութեանց ներկայ գտնուելու: Եւրեմն Անկելանոցի յատուի բոխիկ պէտք է որ պատասխանատու ճանչցուի եւ իրմէ կախում ունենան ամեն տեսակ բժշկական ուղղութիւնը, եւ ատոր համար պէտք է որ կատարեալ համաձայնութիւն ըլլայ միշտ ընդ մէջ Անկելանոցի յատուի բժշկին եւ ընդ մէջ վերաբոյժին եւ այլ մասնագէտ բոխիկներու, եւ ահա այդ ամենուն փափաքած համաձայնութիւնն ու եւ է կերպիւ գոյացնել շխտեանյուս համար է, որ թէ նախորդ եւ թէ վարչականի գիմնու պէտքն զգացինք առ ի անօրինել զարժանն եւ զկարեւորն:

Եթէ վարչական ժողովը անձեռնհաս գտնուի բժշկական խնդրոյ մէջ լուծման մասին վերջնական զօրն մը տալ, կ'առաջարկենք որ ընդ հուպ կազմէ բժշկական միացուն քննիչ յանձնաժողով մը մեր Հասարակութեան պատկառելի եւ անկողնակալ բոխիկներէն, հաճախ եւ տեղեակ Անկելանոցի վիճակին, եւ այդ յանձնաժողովին յանձնէ Անկելանոցի բոխիկին եւ վերաբոյժին միջեւ տեղի ունեցած անհամաձայնութեանց քննութիւնը եւ պէտք եղած դարմանն ու կարգադրութիւնը, եւ ապագային ամեն տեսակ բժշկական խնդիրներն ալ այդ միացուն յանձնաժողովին քննութեան ենթարկուին: Օգտակար կը գտնեմք այդ ժողովին մէջ վարչական ժողովոյ եւ խորհրդոյն կողմանէ միջնակ անգամ ներկայ գտնուին գէթ մի անգամուս համար:

Կ'առաջարկենք որ բժշկական քննիչ եւ գործարար յանձնաժողովին նախադասէ Բար. ձրապատիւ Տգթթօր Նաֆիլեան Գաշա, եւ անգամն ըլլան Տգթթօր Հէգիման, Մակեման եւ Ուկիան էֆենտիները, վարչականին կողմանէ Գասպպեան Վիշեն եւ խորհրդոյն կողմանէ Երազեան Միհրան էֆենտիները:

Խորհուրդս ուրիշ բան չպատկեր յանձնաժողովին, եթէ ոչ գոյացնել կատարեալ համաձայնութիւն մը ընդ մէջ բժշկի եւ վերաբոյժի, եթէ կարելի ըլլայ, եւ քննելով բժշկաց համար պատրաստուած կրկին կանոնագրու-

թիւներէն ընտրել լաւագոյնն եւ հաստատել յապագային դերք միալու համար ու եւ անպատեհ հոլթիւններէ:

Մենք անձնակառնի վրայ խնդիր չունիմք, բայց կը կրկնեմք, ով որ ալ ըլլայ Անկելանոցի յատուի բոխիկ, զայն կ'ուզեմք ճանաչել ուղղակի պատասխանատու Անկելանոցի ամեն տեսակ բժշկական գործառնութեանց, ի հարկին գիմնով միշտ բժշկական քննիչ եւ գործադիր յանձնաժողովին:

Խնդրելով գերկնաւոր օրհնութիւն Ձեր՝ մեմբէ ամենախորին պատուանդը

Ամենպատիւ Գերբընտիկ Հոգեւոր Տեսաւոր

Բառնարաս Ծ. Վ. Սամանճեան
Առեւապետ Խորհրդոյ Անկելանոցի
Միհրան Երազեան
Պետրոս Թ. Շաշեան
Գերգոր Գ. Պրբ. քլեան
Պողոս Էդրպէթեան
Վ. Միհրան (Դւ. Պար. Թւ.)

Տեղեկագրոյն կը յաջորդէ նաեւ հետեւեալը:

ԱՆԿԵԼԱՆՈՑ Կ. ՎՍՈՑՈՑ

Ս. ՅԱԿՈԲ

Բանկալքի 8/21 Մարտ 1901:

Թիւ 33

Ամենպատիւ Գերբընտիկ Հոգեւոր Տեր Գաշեմբե Գատկառելի վարչական ժողովոյ

Հանգուցեալ Սինան Պետրոս Աշայի կողմէ Տիկին Գիւրգիւնայի եւ անոր որդւոյն Գեորգոյ Անկելանոցի նախարած եւ մահապառնէն Հէգիման Միքայէլ էֆենտի կողմէ Տիկին Լուիզայի վրայ գտնուած Գերիթեյ, Էշիլի, Քէհաթիանէ ճամբուն վրայ Թիւ 69, 1200 կանգուն գետինը վաճառուեցաւ մեր եւ վրէ. ժողովոյ գիտակցութեամբ, եւ ստուել ոսկի օսմ. 420 առժամագլուս դրամատուն մը գրուեցաւ յանուն յիշեալ Տիկին Լուիզայի:

Այժմ կ'առաջարկուի վաճառեալ գետնոյն ստուել մարմնակալն ալ Անկելանոցի, պարտապան ընելով անոր ստուել 3 երբե օսմ. ոսկու մամաթնոյ կատակացնելու յիշեալ Տիկին Գիւրգիւնայի եւ անոր որդւոյն Գեորգոյ, յորդակ իրենք ի կիսան են, պայման դնելով միանգամայն որ Անկելանոցը յիշեալ գումարը դարձած ի կատարուած նոր յիմարանոցի:

Առաջին պայմանը միջ անպատեհ չմտնի, քանի որ կարող է Անկելանոցը այն գումարը չափեցնել եւ գուցէ աւելի եւս արգիւնաբեր ընել:

Գալով առաջարկեալ երկրորդ պայմանի՝ այսինքն այն գումարին յիմարանոցի յիմարան համար գործածուելուն՝ կ'ընեմք թէ նախքէ մեր Հասարակութեան յիմարանոցին արդէ վիճակը, որ բաղդատամբ Անկելանոցի միւս մա-

սերուն հետ շատ հեռի է գտնացուցիչ ըլլալէ, եւ նոր յիմարանոցի մը շինութիւնը տնհրաւ ծախշ է: Mongeri եղբայրը ծրագրակն համեմատ, որոնց մին յիմարարութեւ միւսը ճարտարագետ է, 1000 օտմ. ոսկիով բառական կոկիկ նոր յիմարանոց մը կրնայ կառուցուիլ, որ ի հարկին կրնայ քրտնաձկութիւն յաւելուածական ծխեցեթով Կը մնայ խորհիլ թէ ինչպէս պէտք է հայթայթել 1000 ոսկին:

Եթէ ընդունինք առաջարկեալ կրկին պայմաններն, պիտի ունենանք ի ձեռին պատարաստ 420 ոսկի: Աւելցնենք ստոր վրայ 300 ոսկի ալ յուսահողի Սամանճեան Գարրիէլ Ազալի Անկելանոցի նուիրած քարայնէն կէս տան գինը, որ բարեբարը այս նպատակաւ Անկելանոցի կառկած եւ անոր կտակահատար կարգած է իր ազգականն եղբւր խորհրդոյ Ստեմանպետը, կ'ունենանք 720: Աւելցնենք 200 ոսկեայ գումար մ'ալ որ բառական սորոններէ ի վեր Անկելանոցին մէջ դարձանաւ յիմարի մը հորեական ժառանգութեան բաժինն է, որոյ գանձման համար ի կաշխատուի՝ կ'ունենանք յայնժամ հազար ոսկի օտմ. պակաս ութնուն, որուն լրացման համար յուսալից եմք որ բարեբար մը գտնուի:

Կոր յիմարանոց մը ունենալով մեր ինամոց յանձնեալ թշուառները լաւագոյն վիճակ մը պիտի ունենան, միանգամայն հասոյթէլ նոր աղբիւր մը գտած պիտի ըլլայ Անկելանոցը:

Կոր յիմարանոցի մը տեղւոյն ընտրութիւնը ընել շատ Գերիւր չէ, պէտք է լաւ ուսումնասիրել տեղւոյն ընդարձակութիւնը, դիրքը օդը, մերձաւորութիւնը հարկաւորութեան գիւրտութիւնը եւ այլն, տար ճամար պէտք է յաճան ի ժողով գումարել շինութեանց յանձնածորովք, որոյ պատուական անգամներն են Մեծաշուք Տեալը Բեքթաշեան կոմիտան, Գասապեան Վէնսան, Զինկիլի Ժան, Զիբօշեան Սահակ եւ Գազդեան Անտոն Էֆենդիները:

Ահաւասիկ Ամէ. Գերիւր. Լոգ. Տէր եւ Մեծաշուք Տեալը, մեր խորհրդակցութեան արդիւնքը, զոր համառօտակի կը տեղեկագրենք Ձեզ սպասելով անյայտ Զեր պատասխանոյն ի մասին հետեւեալ կրկին հարցմանց:

Կախ թէ կրնանք ընդորել 420 ոսկին փոխարէն 3 ոսկի ամսաթուով յատկացելով:

Երկրորդ թէ այդ գումարին վրայ աւելցնելով յիշեալ միւս գումարներն ալ ձեռնարկել նոր յիմարանոցի մը շինութեան:

Խնդրելով գերկառաք օրհնութիւն Զեր՝ մեամբ ամենախորին պատկառանքը

Ամենապետ

Բառնարատ Ծ. Վ. Սամանճեան
Գրիւր Գ. Պրոր ըլնան
Պօստ Ընդպէթճեան
Միհրան Երապեան
Տ. Կ. Վէնսան Միհրանեան

Երազեանի վերջին ստորագրութիւնն է զոր կը տեսնենք հոս, վրան զի եւ երկու հրա-

ժարածներն մին ըլլալով հանդերձ՝ իր պաշտոնը շարունակեց մինչեւ որ իր տեղը Ազգ. վարչութիւնէն կարգուեցաւ Զիբօշեան Սահակ, իսկ միւսը Պետրոս Թ. Շաշեան երկրորդ շրջանին սկիզբը վատառողութեան պատճառաւ արգեն հեռացած էր եւ տեղը կարգուած Վէնսան Միհրանեան իրրեւ պատուաբեր անգամ օգտուելու համար անոր բազմամեայ փորձառութեան: Շաշեանի ատենադարձութեան պաշտանն ալ Ընդպէթճեան կը վիճակի: Մօրա 10 որդեամբարով ալ կը հաստատուի Լոգաբարձութեան կողմանէ առաջարկեալ բժշկական յանձնածորովք, որ Անկելանոցին երկու բժշկիներուն մէջ ծագած խնդրոյն քննութեան ձեռնարկելով Մարտի 25ին ի խորհրդարանի Անկելանոցին՝ խնդրք օրը հետեւեալ տեղեկագիրը կ'ուղղէ:

Առ Պատուական Լոգաբարձութիւն

Ս. Յակոբ Ազգային Անկելանոցի.

Ազգային Պատկառելի վարչական ժողովոյ արտօնութեամբ եւ Պատուարժան Լոգաբարձութեանդ խնդրանքը կազմեալ բժշկական յանձնածորովք՝ ներկայացեալ խնդիր շնորհէն ընելու եւ պէտք եղած կարգադրութիւնը ընելու համար Մարտ ամսոյն 25ին կիրակի օրը ընդ նախագահութեամբ Բարձրագոյն Զբոթօր Նաֆիլեան Ստան Բաշայի նիստ գումարելով՝ յետ երկրի խորհրդակցութեանց եւ միշտ ի նկատի առնելով Անկելանոցին օգուար՝ միւս խնդիրութեամբ ան որոշողութեան կը յանդի թէ Անկելանոցին վերաբուծական մտքը միշտ բաց ըլլայ Մայրաքաղաքին մէջ գտնուող ծնոթ վերաբուծներու եւ մասնագէտներու, ինչպէս եւ Բարձրագոյն Նաֆիլեան Բաշա, Նապարեան Պէյ, Արզումանեան, Տատուր, Ճէմալ Բաշա, Տրին, Գաճալօր Օղլու, Բաշոյեան եւ այլն, եւ թէ ողբա ազատ ըլլան թէ իրենց մասնաւոր հիւանդները Անկելանոց բերելով եւ թէ Անկելանոցի հիւանդաց խնդրանքը որ եւ իցէ վերաբուծական գործողութիւն կատարել իրենց պատասխանատուութեան ներքին:

Նշանպէս կ'որոշէ յանձնածորովք որ Անկելանոցի ներքին հիւանդութեանց յատկացեալ բաժնին մէջ բժշկել միշտ պարտաւոր ըլլայ ծանօթ բժշկիներ կողմէ ի խորհրդակցութիւն (Consultation) ամեն անգամ որ հիւանդ մը խնդրէ զայն:

Յանձնածորովք իր միւսհաւան որոշողութիւնը մի անգամ ընդ միշտ ներկայացնելով Պատուարժան Լոգաբարձութեանդ՝ նորա անմիջական գործադրութիւնը կը խնդրէ:

Մեամբ խորին յարգանք

Տր. Անտոն Նաֆիլեան

Ս. Միհրանեան

Ս. Էնգիմեան

Ս. Ոսկեան

(Դւ. Պար. Թը.)

Հոգաբարձութիւնը տեղեկագրոյս օրինակը կը ղըկէ առ Ազգ. վարչութիւնն, որ անոր յիշատակած կանոններուն վրայ յաւելուլ կը փութայ բաժնացի եւ գեղաբարձաց ցառուկներէն կանոններ, որոնց խմբագրութիւնը Հոգաբարձութեան կը թողու, իսկ ընտնութիւնը եւ վաւերացումը իրեն կը պահէ: Դոր կառուցանելի յիմարանոցին համար ալ կ'ըսէ՝ թէ պէտք է նախ գումարել յաճախակի Անկէլանոցիդ շինութեանց յանձնաժողովը, եւ լաւ ուսումնասիրելով գործը՝ յատկաձեւ եւ ծրագիր մը պատրաստել եւ մեզ ղըկել նոյնպէս ի ընտնութիւն, որպէսզի իմանանք թէ իրոք այնքան գումարով կարելի պիտի ըլլայ ռաճարելաւ յիմարանոցին շինութիւնը եւ պարագաները:

Այս ամիսը Mongeri ճարտարապետեն պատրաստուելով՝ կը ներկայանան Ազգ. վարչութեան եւ ընդհանրապէս կը հաւանին: Բայց եւ այնպէս նոր յիմարանոցը մինչեւ հիմայ չէ շինուած՝ նախամեար համարուելով ըստ Հոգաբարձուաց անոր տեղ մեծ յարկաբաժնի (Departement) մը շինութիւնը, որուն իրագործման համար պահել կ'սկսին այնուհետեւ արտաքոյ կարգի նուէրները, եւ Անկէլանոցի թէ մեծ եւ թէ փոքր կալուածոց վաճառումէն գոյացած գումարները, որուն կը հաւանի նաեւ Ազգ. վարչութիւնը: Այս յարկաբաժնին համար 652 մեթր գետին կ'որոշուի Ս. Յակոբայ երկրին այն մասին վրայ, ուր Պանկալիդի եւ Էլմա Ցաղը ճամբաներէն անկիւն կը ձեւանայ, եւ ըստ հրահրանաց շինութեանց յանձնաժողովոյն քանի մը ազգային եւ օտար ճարտարապետներ յատկաձեւեր կը շինեն եւ ծածուկ ստորագրութիւններով Ազգ. վարչութեան կը ներկայացնեն:

Ինչպէս ուրիշ Հասարակութեանց մեր Ազգ. Պարտադրարանն ալ կը հասնի ոսկի օսմ. 100 խուճած Համա Բ. ին Զատկի առթիւ շնորհած նուէրներ, որմէ Ս. Յակոբայ կը ղըկուի 100 Մեճիտիէ միայն, գահական 2000:

Վերոյիշեալ կանոնաց ծրագիրը Ազրիլ ամսոյն վերջերը Հոգաբարձութեան ժողովէն վարչականին ներկայանալով ի ընտնութիւն՝ ամիսէ մը յետոյ կը վերագործուի վաւերացեալ եւ հաստատուլ, որուն պատճէնը հոս կ'արտագրենք:

(Ըրոն-ն-իւն) Է. Ի ՍԱԿԱՆ Վ. ՍՐԱՊԵՆՆ Միայրան Աստուծոյ:



Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

ԲԱՆԱԽՍԱՌԻԹԻՒՆ

ՏՕՐԹ: Հ. Պ. ՄԱՏԹԻՈՍՅԱՆԻ

ԻԺՃՈՒԹԵԱՆ ՑԱՆԱԳԵՆԿԻ ԱԹԻՒՒ

1863—1913

Սրբազան Հայր,

Տիկնայք եւ Տեառք,

Սուա չէ, որ մարդ էակը կենսորի ամենատուր ընթացքին՝ իւր բազմաշարար վիճակին մէջ կը պատահի մերթ այնպիսի բարեղէպ առիթներու, որոնք՝ ամեն կերպ վիշտ եւ դառնութիւն պահ մը մոռցնել տալով, կը պատճառեն օրտի կատարեալ հրճուանք, հոգեկան լիուրի գոհունակութիւն:

Այսպիսի քաղցր տպաւորութեան մը մէջ կը զգամ զեւ այս վայրկենիս, երբ հազուագիւտ պատիւը կ'ունենամ՝ յանուն հայ բժշկական դասուն խօսք աննելու Յօրհիւնական հանգիստ ժողովին մէջ, որ կը գումարուի պատկառելի հայ բժշկի մը յիսուն երկար տարիներու աշխատութեան յարգանքի պարտք մը հաստացանելու համար:

Ինչ վիճակուած այս յոյժ հաճելի պաշտօնիս աւագ պարտականութիւնն ուրեմն կը համարիմ նախ եւ առաջ իմ ջերմ ու խնդան շնորհաւորութիւններս յայտնել՝ յարգելի Յօրհիւր բժշկապետ Տօթ. Հ. Պ. Մատթեոսեանի, որ առողջ տերութեան մը մէջ, դեռ աշխոյժ գործունէութեամբ, բախտ կ'ունենայ իւր արուեստի կիրարկութեան կէս դարը բոլորելու:

Թուրքոյ հայ բժշկական ասպարէզին մէջ եղած են արդէն ուրիշներ, թէեւ քիչեր, որոնք յիսուն տարի բժշկական գործին կենաց ունեցած են. առանց շատ հիշերն յիշելու, մեր օրերէն պիտե՛ք՝ որ մեծանուն Տօթ. Սերգիշէն էֆէնտին իւր բժշկութեան (1839) 58րդ տարին († 1897) մէջ փակեց աշերը. որքացեալ Տօթ. Ստեփան բաշա Այստեանը 54 տարիէ ի վեր (1847) բժշկութիւն կ'ընէր եւր ննջեց († 1901). Նշանաւորն Տօթ. Գարբիէլ բաշա Սեւեան 57 տարուան բժիշկ (1849) էր մեռած ատենը († 1905) եւ Տօթ. Անտոն բաշա Դաֆիւեան, իւր փարդեան վկայականն ստանալուն (1862) յիսունամակին վախճանեցաւ († 1912):

Ի Կ. Պոլսոյ մէջ վախճանած հոգեւոր հայ բժիշկներէ՝ Մանուէլ Ըսլեան 58 տարի բժշկական գործունէութեամբ: